

# Սուրբ Ծննդյան տոները Երևանում



2007թ. հունվարին Շուշիի 9-10 տարեկան երեխաները ուսուցիչների ուղեկցությամբ 3 օր անցկացրեցին մայրաքաղաքում, եղան մայրաքաղաքի տեսարժան վայրերում, այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, մասնակցեցին ամանորյա ներկայացումների:



Նրանց սպասում էր ընդունելություն Երևանի քաղաքապետարանում, հանդիպում և ճաշ քաղաքապետ, «Շուշի վերածնունդ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Երվանդ Զախարյանի հետ, հանդիպումներ Հիմնադրամի հոգաբարձուների հետ և իհարկե ամանորյա նվերներ:

Ծննդյան տոները շուշեցի երեխաների համար Հիմնադրամը կազմակերպել է Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ:



Ծրագրի նպատակը փոքրիկ շուշեցիների համար Սուրբ Ծննդյան օրերը տոն դարձնելն էր, որպեսզի նրանք, այցելելով համահայկական մայրաքաղաք, զգան հայրենակիցների հոգատարությունը, ինչպես նաև իրենց քաղաքի ու իրենց կյանքի անանջատելիությունը Երևանից և Հայաստանից:

Յուրաքանչյուր տարի Հիմնադրամը նախատեսում է իրականացնել Շուշիի երեխաների այցելություն մայրաքաղաք: Կլինեն նաև Հայաստանի, Արցախի, սփյուռքի դպրոցականների և ուսանողների այցեր Շուշի:

